ԿԱՍՊԵՐԻ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

(մ. թ. ա. VI դ.—մ. թ. ա. IV դ.)

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

Հունա-հռոմեական աշխարհագետներն ու պատմիչներն ամենավաղ շրջանից խոսել են Կովկասյան գլխավոր լեռնաշղթայից հարավ ապրող ցեղերի մասին։ Դեռևս Հեկատեյոս Միլեթացին հիշում է մոսխերին, մակրոններին ու կովկասյան այլ ցեղերի[1], *իսկ Հերոդոտը՝ Աքեմենյան Պարսկաստանի սատրապությունները կազմող կասպերին, սակերին, մարերին ու մյուսներին*[2]։ *Կովկասյան ցեղերին ամենատարբեր առիթներով հիշատակել են նաև նախքան մ. թ. ա. I դ. ապրած հունա-հռոմեական այլ հեղինակներ ևս, սակայն ո՛չ նրանք, ո՛չ Հեկատեյոս Միլեթացին և ոչ էլ նույնիսկ Հերոդոտը, որն այնքան մանրամասն տեղեկություններ է հաղորդում կովկասյան ցեղերի, Աքեմենյան Պարսկաստանի սահմանների, նրա սատրապությունների, դրանցում ընդգրկված ցեղային միությունների, սրանց ցեղային հատկանիշների մասին, ալբանցիներին չեն հիշատակում*[3]։ *Այս հանգամանքն ուսումնասիրողները բացատրում են նրանով, որ նախքան մ. թ. ա. IV դ.՝ մինչև պատմության մեջ նրանց առաջին հիշատակությունը*[4], *ալբանցիները մերձկասպյան այլ ցեղերի հետ մեկտեղ կրել են մի այլ՝ ընդհանուր անուն և դրանով էլ հանդես եկել պատմության մեջ։ Համաձայն նրանց միահամուռ կարծիքի, դա կարող էր լինել «կասպ», «կասպեր» անվանումը, որը գործածվել է ընդհանրապես Կասպից ծովի ափերին բնակվող ցեղերի*[5], *այդ թվում՝ ալբանցիների համար*[6]։ *Դրանում դժվար չէ համոզվել, եթե անդրադառնանք ինչպես Հերոդոտի, այնպես էլ ավելի ուշ հեղինակների վկայություններին, որոնցում Կասպից ծովի արևմտյան ափագծի երկարությամբ հիշատակվում են միայն «կասպեր»*[7], *«կասպիական ժողովուրդ»*[8], *«կասպիացիներ» անունով ցեղեր*[9]։ *Այս հանգա-*

---

[1] «Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе», собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. I, СПб., 1890, с. 3.

[2] Herodotus, III, 92.

[3] *Հունա-հռոմեական աղբյուրների հետևությամբ մենք ևս գործածում ենք «ալբանցիներ» և «Ալբանիա» անվանումները։*

[4] Arrian, Anabasis Alexandrt, III, 8, 4:

[5] W. W. Tarn, Alexander the Great, t. II, Studies and sources, Cambridge, 1950, p. 13, И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 447, пр. 5; К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании IV в. до н. э., УП в. н. э., М.—Л., 1959, с. 50.

[6] И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 447, ծան. 5,* К. В. Тревер, *նշվ. աշխ., էջ 50։*

[7] «Известия древних писателей греческих и латинских о Скифии и Кавказе», собрал и издал с русским переводом В. В. Латышев, т. 2, СПб., 1904, с. 116, 12F.

[8] Pliny, Natural History, VI, 15.

[9] «Известия древних писателей...», т. I, с. 261, 605—608.

մանքը թույլ է տալիս եզրակացնելու, որ, իսկապես, հազիվ թե նշված անուններով կոչվեր Կասպիականի արևմտյան ափին ապրող մի որոշակի ցեղ։ Դրանք, իրոք, Կասպից ծովի շուրջը բնակվող ցեղերի հավաքական անվանումն էին[10]։

Կովկասյան ցեղերի շարքում ալբանցիների չհիշատակվելու պատճառի այսպիսի մեկնաբանությամբ ուսումնասիրողները, բնական է, պետք է հանգեին մի ուրիշ հավանական ենթադրության. այն է՝ ալբանցիները «կասպեր» հավաքական անվան տակ մտել են Աքեմենյան Պարսկաստանի վարչական միավորներից մեկի՝ 11-րդ սատրապության, կազմի մեջ։ Աքեմենյան Պարսկաստանի վարչական այդ բաժանումների մասին խոսում է Հերոդոտը։ Նրա

---

10 Մեզ թվում է, որ մերձկասպյան ցեղերին «կասպեր» ընդհանուր անունով կոչելիս հունա-հռոմեական հեղինակները ելել են վերջիններիս զբաղեցրած աշխարհագրական դիրքից, տվյալ դեպքում Կասպից ծովի անունից։ Անծանոթ ցեղերին աշխարհագրական դիրքից բխող ընդհանուր մի անունով կոչելու օրինակ է տալիս Պոմպոնիոս Մելան՝ իր «Երկրագրություն» աշխատության մեջ, ուր գրում է. «Պոնտական [ծովի] շուրջը, զբաղեցնելով առանձին մարզեր, ապրում են մի քանի ժողովուրդներ, որոնք բոլորը կրում են մեկ անուն՝ պոնտական, Մեոտական լճի շուրջը՝ մեոտական» («Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1949, № 1, с. 273)։ Պոնտական ցեղերի մասին, որոնք մեզ հայտնի տիբարենները, մոսինոյկներն ու մակրոններն են, նույնն է ասում և Ֆլորուսը՝ մի ուրիշ լատին պատմիչ (ВДИ, էջ 231)։ Պոմպեոս Տրոգոսը ևս Ցուստինոսի համառոտությամբ մեզ հասած աշխատության մեջ նշում է խալիբների ցեղերի, որոնք իրենց անունը ստացել էին համանուն գետից (Юстин, Эпитома сочинения Помпея Трога, XLIV, III, 8)։ Այսպիսի հետևողականությամբ, կարծում ենք, Կասպից ծովի շուրջը բնակվող ժողովուրդները կամ ցեղերն էլ պետք է անվանվեին «կասպեր»։ Այս ենթադրությունը հավանական է դառնում, մանավանդ, երբ դիմում ենք Ստեփանոս Բյուզանդացու ուղղակի վկայությանը։ «Կասպից ծով,— գրում է նա,— նրանից են առաջացել Կասպեր, Կասպից լեռ, Կասպիական այրեր, Կասպից երկիր և Կասպ անվանումները» («Известия древних писателей...», т. I, с. 261)։ Պատմական գիտության մեջ տարածում գտած այն կարծիքը, որ իբր ծովը «Կասպ» անունով ցեղից է իր անունը ստացել, կազմվել է Ստրաբոնի հետևյալ տեղեկության հիման վրա. «...Կասպիանա մարզը, որն այդպես է կոչվել այժմ անհետացած ցեղի անունով, որով կոչվել է և ծովը» (Strabo, XI, IV, 5)։ Ծովի՝ իբր Կասպերի անունով կոչվելու մասին նրա աղբյուրը Էրատոսթենեսն է, որը, սակայն, Կասպերի անունից բխեցնում է ոչ թե ծովի, այլ Կովկաս լեռան անունը։ Այդ մասին հայտնում է դարձյալ Ստրաբոնը։ «Էրատոսթենեսի խոսքերով,— գրում է նա,— տեղի բնակիչները Կովկասը կոչում են Կասպիոն, հավանաբար վերանվանելով այդպես կասպեր [ցեղի] անունով» (XI, II, 15)։ Ինչպես տեսնում ենք բերված վկայությունից, Ստրաբոնն ինքն է ենթադրություններ անում «կասպ» ցեղի անունով լեռան (իսկ ապա նաև ծովի) անվանման մասին, ենթադրություն, որն այնուհետև տիրապետող է դարձել հունա-հռոմեական հեղինակների աշխարհագրական և պատմական երկերում։

Որպես ծովի անունով մերձափնյա ցեղերին կասպեր կոչելու մեր ենթադրությունը հաստատող կողմնակի փաստ կարող ենք նշել ինչպես այն, որ Պարախոաթրաս լեռները ծովին հարող մասում կոչվել են Կասպից լեռներ (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 67), այնպես էլ այն, որ ծովեզերյա շրջանի մի քանի լեռնանցքներ նույնպես կրել են Կասպիական անունը (Κασπιαὶ πύλαι) հաճախ նաև շփոթությունների տեղիք տալով (Pliny, VI, 15, Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 67)։ Մեր այս եզրակացությունը հաստատվում է նաև լեզվական տվյալներով։ Հերոդոտի «Պատմության» մեջ Կասպից ծովի համար գործածված η Κασπίη ձևը «չի նշանակում «Կասպերի ծով»։ Իսկ կասպերի անվան Κασπιοί ձևը՝ շնորհիվ առաջին յոտայի նշանակում է կասպիացիներ։ Դա նշանակում է, որ ցեղանունն է առաջացել ծովանունից և ոչ թե հակառակը» (Ալեքսան Հակոբյան, Կասպերի և Կասպիանա (Կասպք) մարզի տեղադրության մասին (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1983, № 1, էջ 94)։

վկայությամբ կասպերն ուրիշ այլ երեք ցեղերի՝ պավսիկների, պանտիմաթների ու դարեյտների հետ կազմել են հիշյալ սատրապությունը և որպես հարկ վճարել 200 տաղանդ[11]։ Այստեղ հիշատակվող ցեղային միություններից պավսիկներին ու պանտիմաթներին ուրիշ և ոչ մի հեղինակ չի հիշատակում[12]։ Դարեյտներին գիտե Պտղոմեոսը որպես Մարաստանի մի մասը գրաղեցրած ցեղերի[13]։ Նա և այլ հեղինակներ հաճախ են հիշատակում այս սատրապությունը կազմող վերջին ցեղային միությանը՝ կասպերին[14], որոնց բնակության վայրով էլ որոշվում է 11-րդ սատրապության տեղը։ Ընդհանրապես որպես կասպերի բնակության վայր Կասպից ծովի արևմտյան ափը ցույց տվող ուսումնասիրողները, սակայն, ափագծի երկարությամբ նրանց տարբեր տեղեր են հատկացնում։ Ի. Դյակոնովը կասպերի բնակության վայր է ճանաչում Ապշերոն թերակղզուց հարավ ընկած տարածությունը[15], Ա. Բոլտունովան՝ այժմյան Մուղան-Միլի-Ղարաբաղ գոտին[16], Վ. Բարտոլդը՝ հին Կասպիանե երկրի շրջակայքը[17]։ Կ. Տրեվերը Կասպիանե կոչվող երկրի մասին, հիմք ունենալով Ստրաբոնի վկայությունը, ուղղակի գրում է. «Խոսելով Կասպիանեի մասին, Ստրաբոնը նկատի ուներ ոչ միայն Կուրից հարավ ընկած տարածքը, այլև նրա ձախափնյակը (Ապշերոնի թերակղզին և նրան հարող մարզերը), ուր բնակչությունը մ. թ. առաջին դարում, հնարավոր է, շարունակում էր կրել կասպերի անվանումը»[18]։ Այստեղից էլ պատմագիտական գրականության մեջ և քարտեզներում 11-րդ սատրապությունը սխալմամբ ցույց է տրված մի ընդարձակ տարածության մեջ՝ Կուրի աջ ու ձախ կողմերում, Արաքսից հարավ ընկած տարածքի լայն ընդգրկումով[19]։

Սակայն մեզ թվում է, 11-րդ սատրապությունն ունեցել է զգալիորեն ավելի փոքր տարածք, քան ներկայացվում է։ Ինչպես տեսանք, խնդրառու սատրապության տարածքը որոշելիս ուսումնասիրողները հիմք են ունեցել կասպերի բնակության վայրը, որի տեղորոշման հարցում, սակայն, նրանք համակարծիք չեն։ Հերոդոտի ժամանակներում կասպերը լինելով Կասպից ծովի մերձափնյա ցեղերի ընդհանուր հավաքական անունը, ավելի ուշ՝ ցեղերի տարբերակման ժամանակ, դառնում է միայն մի էթնիկական միավորի՝ կասպերի, անվանումը։ Ահա թե ինչու կասպերի տեղորոշման համար կարևոր են

---

11 Herodotus, *III, 92*։ Ի. Դյակոնովը ենթադրում է, որ 11-րդ սատրապության կազմի մեջ մտել են և կատիշները (անտիկ հեղինակների καδουσίοι — կադուսիները), կարծելով, որ հիշատակվող ցեղերը կատիշների և մյուս «անարիակների», այսինքն «անարիների» ոչ իրանական բնակիչների, առանձին ցեղեր են (И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 447*)։ Սակայն այս ենթադրությունը կարիք ունի ճշգրտման։

12 Արդյո՞ք Ստ. Բյուզանդացու մոտ հիշատակվող ցեղերից «Կովկասի տակ» ապրող «պավսարկները» նույն այս պավսիկները չեն («Известия древних писателей...», т. I, с. 264).

13 Клавдий Птолемей, Географическое руководство, VI, 2, 6. *Հմմտ. նաև* Pliny, VI, 25, 95.

14 «Կասպեր» հիշատակվում են նաև 15-րդ սատրապությունում՝ սակերի հետ մեկտեղ, սակայն նրանց բնակության վայրը որոշվում է Միջին Ասիայում (И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 360*)։

15 *Նույն տեղում, էջ 359*։

16 А. И. Болтунова, Племена, обитавшие на территории Азербайджана в I тысячелетии до н. э. («Очерки истории СССР первобытнообщинный строй и древнейшие государства на территории СССР», М., 1956, с. 224, 226).

17 В. В. Бартольд, Соч., т. II, ч. II, М., 1963, с. 654.

18 К. В. Тревер, *նշվ. աշխ., էջ 45*։

19 А. И. Болтунова, *նշվ. աշխ., էջ 226, նաև էջ 224—225, ներդիր քարտեզը,* К. В. Тревер, *նշվ. աշխ., էջ 44—45,* И. М. Дьяконов, *նշվ. աշխ., էջ 336—337 ներդիր քարտեզը,* М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., *1961, էջ 90—91 ներդիր քարտեզը*։

դառնում հետագա հեղինակների վկայությունները։ Ժամանակագրական կարգով այդ հեղինակներից առաջինը Ստրաբոնն է, որի հակասական տեղեկությունների համաձայն հիշյալ ցեղով բնակեցված Կասպիանե երկիրը գտնվում է մի դեպքում Ալբանիայի կազմում[20], մի ուրիշ դեպքում՝ Մարաստանի, որից էլ, ինչպես հայտնի է, մ. թ. ա. II դ. այն անցել է Հայաստանին[21]։ Ստրաբոնը կասպերի մասին ունի մի ուրիշ վկայություն ևս, որը անտեսվել է ուսումնասիրողների կողմից, բայց քննվող հարցի կապակցությամբ ունի որոշակի արժեք։ «Ծովի (Կասպից—Հ. Ս.) շուրջը,— գրում է նա,— հյուրկաններից հետո բնակվում էին ամարդները, անարիակները, կատիշները, ալբանցիները, կասպերը, ուտիները և, հնարավոր է, մինչև սկյութները ուրիշ ժողովուրդներ»[22]։ Ստրաբոնի այս վկայությունը խիստ ներդաշնակվում է մյուս հեղինակների համանման տեղեկություններին։ Պոմպոնիոս Մելան, որը մոտ մ. թ. 44 թ. գրել է «Երկրագրություն» աշխատությունը, իր ժամանակի հասկացողությամբ Կասպից ծովը պատկերացնելով որպես ծովածոց՝ գրում է. «ծոցաբերանից աջ, նեղուցի ափերին ապրում են քոչվոր սկյութները, հետո՝ Կասպից ծոցի մոտ ապրում են կասպերը և սավրոմատիդներ կոչվող ամազոնուհիները, Հյուրկանյան ծոցի մոտ՝ ալբանցիները...» և այլն[23]։

Կասպերի բնակության վայրն ավելի որոշակի է ցույց տալիս Դիոնիսիոսը։ «Ես այժմ կպատմեմ,— գրում է մ. թ. II դ. հռոմայեցի հեղինակը,— այն ամենի մասին, թե ինչ ցեղեր են ապրում նրա (Կասպից ծովի—Հ. Ս.) շուրջը, սկսելով հյուսիս-արևմտյան կողմից։ Նախ սկյութներն են... ապա ունները, նրանցից հետո կասպերը, սրանցից հետո՝ ռազմատենչ ալբանցիներն ու լեռնային երկրում ապրող կատիշները, նրանց մոտ՝ մարդերը, հյուրկաններն ու տապիրները»[24]։ Դժվար չէ նկատել, որ Կասպից ծովի ափին ապրող ցեղերի թվարկումը կատարված է որոշակի համակարգով։ Բայց եթե Պոմպոնիոս Մելյան ու Դիոնիսիոսը թվարկումը սկսում են հյուսիս-արևմուտքից (ինչպես նշում է և ինքը՝ Դիոնիսիոսը), ապա Ստրաբոնն այդ անում է՝ սկսելով հարավ-արևմուտքից։ Չնայած դրան, բերված վկայություններից ակնհայտորեն երևում է, որ կասպերն ապրում էին Կասպից ծովի արևմտյան ափին ալբանցիների և սկյութների հարևանությամբ ապրող ունների (ուիտների) միջև։

Այսպիսով, հիմք ընդունելով Ստրաբոնի, Պոմպոնիոս Մելայի, Դիոնիսիոսի և սրանց հետևող մյուս հեղինակների[25] վկայությունները, կարծում ենք, որ կասպեր կոչվող ցեղերի բնակության վայրը պետք է փնտրել Կովկասյան լեռնաշղթայի ծովամերձ փեշերին։ Մեզ այդ մտքին է մղում նաև Էրատոսթենեսի հայտնի վկայությունը, թե «տեղի բնակիչները Կովկասը կոչում են Կասպ»[26], թե կասպերն ապրել են Կովկասյան լեռնաշղթայի մոտերքում և կարողացել էին իրենց անունը թողնել լեռան վրա։

Կասպերի բնակության վայրի տեղորոշման համար կարևոր տեղեկություններ են պարունակում նաև հայկական աղբյուրները, որոնք, որքան էլ տարօրինակ է, շրջանցվել են նախորդ ուսումնասիրողների կողմից։ Միայն վերջերս դրանց անդրադարձավ Բ. Հարությունյանը՝ ալբանական ցեղային միավորումներից մեկի՝ լփիններ տեղադրությանը նվիրված իր հոդվածում,

---

20 «Ալբանցիների երկրին է պատկանում և Կասպիանե մարզը, որն այդպես է կոչվել այժմ անհետացած ցեղի անունից, որով կոչվել է և ծովը» (Strabo, XI, IV, 5)։

21 «Մարերից նրանք (Արտաշես Ա-ն և Զարեհը—Հ. Ս.) խլեցին Կասպիանան, Փավլիտիան ու բասորապեդան» (նույն տեղում, XI, XIV, 5)։

22 Նույն տեղում, XI, VIII, 8։

23 «Известия древних писателей...», т. II, с. 125.

24 Նույն տեղում, էջ 186։

25 Նույն տեղում, էջ 207, 293։

26 Strabo, XI, II, 15.

որպես կոնկրետ հարցի քննության հետ առնչվող վկայություններ[27]։ Հայկական աղբյուրներից Ագաթանգեղոսն առաջինն է, որ կասպերին հիշատակում է ալբանական մյուս ցեղային միությունների՝ լփինների և ճիղբերի կողքին։ «Վաղվաղակի,— գրում է նա,—ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտևանայ խնդրեսցեն»[28]։ Ուխտանեսը ևս ունի նույնանման մի վկայություն. «սկսաւ զօրաժողով լինել խոսրով արքայն հայոց և, ժողովեաց զզօրս Աղուանից և զՎրաց, և զԼփնաց, և զՃղբաց և զԿասբից և զզօրս Հոնաց»[29]։ Մովսես Կաղանկատվացին Մեսրոպ Մաշտոցի լուսավորչական գործունեության մասին խոսելիս նույնպես հիշատակում է կասպերին, նրանց տեղը նշելով այնտեղ, որտեղ և վերոհիշյալ հեղինակները. այն է՝ լփիններից ու ճիղբերից հետո. «ձգէր քարոզութիւն աւետարանին (Մաշտոցը—Հ. Ս.) յաշխարհն Ուտիացւոց, և յԱղուանս և ի Լփինս և ի Կասպս և ի դուռն Չորայ և յայլ ազգի ազգիսն»[30]։ Կովկասյան լեռների փեշերին ապրող կասպերին հիշատակում է նաև VII դ. «Աշխարհացույցը». «Ու բնակին... Խենուկք, ապա Շիղեայք, Ճիւղայք, Խեղայք, Կասբք»[31]։

Ուշադրություն դարձնելով նշված հեղինակների վերոհիշյալ վկայություններին, կտեսնենք, որ նրանց մոտ, անտիկ հեղինակների նման, աշխարհագրական վայրերը, մասնավորապես մեզ հետաքրքրող երկրամասերը տրված են որոշակի աշխարհագրական հերթականությամբ՝ արևմուտք-արևելք-հյուսիս-արևելք։ Միաժամանակ, համադրելով անտիկ և հայ հեղինակների վկայությունները, կտեսնենք, որ առաջինների ալբանցիներ-կասպեր-ուններ (ուիտներ) կամ, եթե թվարկումը սկսենք հյուսիս-արևմուտքից, սկյութ քոչվորներ—ուններ-կասպեր-ալբանցիներ շարքին համապատասխանում է վերջիններիս ալբանցիներ-լփիններ և ճիղբեր-կասպեր-հոներ շարքը։ Ակնառու այս համապատասխանությունը, սակայն, կարծես խախտվում է նրանով, որ անտիկ հեղինակները կասպերին հիշատակում են ալբանցիներից հետո, իսկ հայ պատմիչների մոտ նրանց միջև ընկած են լփիններն ու ճիղբերը։ Տարակուսանքներից խուսափելու համար նկատենք, որ հունա-հռոմեական հեղինակները, մոտիկից ծանոթ չլինելով կասպերին, բնականաբար, նրանց պետք է ներկայացնեին ալբանցիներ ընդհանուր անվան տակ, առանց տարբերակման, մինչդեռ հայ պատմիչները, ավելի քաջատեղյակ լինելով ալբանցիների ցեղային կազմին, նրանց բնակեցրած տարածքին, իսկ ժամանակաշրջանով էլ ավելի մոտ կանգնած լինելով նրանց, չէին կարող այդ ցեղերին չհիշատակել առանձին-առանձին։ Տարակուսանք չի կարող առաջացնել նաև այն հանգամանքը, որ նախորդ հիշատակություններում կասպերի հյուսիսային հարևանները, որոնք ներկայացված են «ուրիշ ժողովուրդներ», «սկյութ-քոչվորներ», «ուիտներ» արտահայտություններով, ուշ շրջանում՝ հայ հեղինակների վկայություններում, հանդես են գալիս «այլ ևս որ ի սմին կողմանց», «յայլ ազգի

---

27 Բ. Հարությունյան, Լփինքի տեղադրության հարցի շուրջը («Բանբեր Երևանի համալսարանի», 1981, № 1, էջ 108—124)։

28 «Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց», աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, էջ 17։

29 Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 70։

30 «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 104։

31 «Սրբոյ հօրն մերոյ Մովսիսի Խորենացւոյ Մատենագիտութիւնք», Վենետիկ, 1865, էջ 604, Ա նանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 287։ Կասպերը «Աշխարհացույց»-ի ընդարձակ խմբագրության մեջ չեն հիշատակվում; իսկ «ճիղբք»-ին հաջորդում է «Փիք»-ը, որը Լփինքի աղավաղված ձևն է (Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 54)։

ազգիսն», «ի Դուռն Ջորայ», «Հոնք» անուններով։ Բացահայտ է, որ խոսքը միևնույն ժողովուրդների կամ ցեղերի մասին է։

Ուրեմն, հայկական աղբյուրների կասպերը, ինչպես տեսանք վերոբերյալ վկայություններից, ապրում էին լիփնների հարևանությամբ և արևմուտքում սահմանակցում էին նրանց։ Այդ սահմանագիծը, որը հայկական աղբյուրների տեղեկությունների հիման վրա որոշակիորեն ցույց է տվել Բ. Հարությունյանը, անցնում էր Կովկասյան լեռնաշղթա (այժմյան Ալթըաղաջ գյուղի շրջանում)—Սյանդյու-Մարաղա-Դիջակ լեռ-Փիրսաղաթ գետից արևմուտք գտնվող բլուրներ-Կուր գետ գծով[32]։

Ինչպես արդեն տեսանք, ըստ հունա-հռոմեական աղբյուրների, կասպերն ապրում էին Կասպից ծովի արևմտյան ափին։ Ուրեմն նրանք տարածվել են մինչև Կասպից ծով, որը նրանց արևելյան սահմանն էր։ Հերոդոտի վկայություններից մեկի համաձայն Աքեմենյան Պարսկաստանի սահմանները հասել էին մինչև Կովկասյան լեռնաշղթա[33]։ Տեսանք, որ կասպերն ապրում էին հենց այդ լեռան փեշերին, մի բան, որ ցույց է տալիս, թե դրանք այն ցեղերն էին, որոնցով էլ ավարտվում էր Աքեմենյանների տիրապետության շրջանը հյուսիսում։ Կնշանակի ամբողջ տերության հյուսիսային սահմանը՝ Կովկասյան լեռնաշղթան, սահման էր նաև կասպերի երկրի համար։ Եվ, վերջապես, հարավային սահմանը Կուր գետն էր, քանի որ նրանից հարավ տարածված էր Մարաստանը։

Այսպիսով, կասպերը բնակվում էին մի երկրամասում, որի սահմանները հյուսիսից եզերում էր Կովկասյան լեռնաշղթան, արևելքից Կասպից ծովը, հարավից՝ Կուր գետը, իսկ արևմուտքից՝ Կովկասյան լեռների՝ Ալթըաղաջ գյուղի շրջանում սկսվող ու հարավում՝ Փիրսաղաթ գետից քիչ արևմուտք Կուր գետի հետ հատվող գիծը։ Այդ երկիրը որոշակիության և Կասպիանա-Փայտակարանից տարբերելու համար կկոչենք Կասպք։

Կասպերի երկրի այսպիսի տեղորոշումից հետո կարելի է վերադառնալ Ստրաբոնի՝ Կասպերին վերաբերող հակասական տեղեկություններին։ Ինչպես տեսանք, նա կասպերի մասին խոսելիս մի դեպքում նրանց երկիրը համարում է Ալբանիայի մարզերից մեկը՝ իր ժամանակ արդեն անհետացած ցեղերի անունով[34], մյուս դեպքում՝ Մարաստանի մի երկրամասը, որը մ. թ. ա. II դ. Մեծ Հայքին էր միացրել հայոց թագավոր Արտաշես I-ը (մ. թ. ա. 189—160)[35]։ Մեզ թվում է, որ Ստրաբոնը շփոթել է տարբեր, բայց միևնույն անունը կրող ցեղերի։ Դա, ամենից առաջ, նկատելի է նրանից, որ նա, կասպերին համարելով անհետացած ցեղեր, այնուամենայնիվ, հաղորդում է, որ կասպերը ալբանցիների հարևանությամբ ապրող ցեղեր էին[36]։ Նշանակում է վերջիններս կային, գոյատևում էին և իրենց երկրի հետ միասին մտնում էին Ալբանիայի կազմի մեջ։ Ուրեմն, ուրիշ նույնանուն ցեղեր կային, որոնք Ստրաբոնի օրոք իսկապես վերացել էին։ Մեր կարծիքով, դրանք կարող էին լինել Մարաստանի երկրամասերից մեկի՝ Կասպիանեի, բնակիչները և ահա թե ինչու։ Նույն հեղինակի վկայությամբ սրանք էին, որ անջատվելով Մարաստանից միացվեցին Մեծ Հայքին և շուտով, ինչպես և միացված ուրիշ ցեղեր, հայերի հետ «միալեզու եղան»[37], այսինքն՝ հայացան։ Միացման հետևանքով առաջ եկած այս լեզվական փոփոխությունն իր հետ բերում է նաև էթնիկական փոփոխություն և Ստրաբոնի օրոք (մ. թ. ա. I—մ. թ. I դդ. սահմանագլխին)

---

32 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 123։

33 Herodotus, III, 97.

34 Strabo, XI, IV, 5.

35 Նույն տեղում, XI, XIV, 5։

36 Նույն տեղում, XI, VIII, 8։

37 Նույն տեղում, XI, XIV, 5։

սրանց դարձնում իրոք անհետացած ցեղեր[38]։ Ստրաբոնը, սրանց շփոթելով Ալբանիայի կազմի մեջ մտած ցեղերի հետ, այդ անհետացումը վերագրում է վերջիններիս և, նկատելով, որ ինքն իրեն հակասում է, հայտարարում է, թե «Կասպիանեն» պատկանում է ալբանցիների երկրին։ Իսկ քանի որ այս Կասպիանեն համապատասխանում է հայկական աղբյուրների Փայտակարանին, ուսումնասիրողներից ոմանք շտապել են անվերապահորեն ընդունելու նրա հայտարարությունը։ Սակայն, ինչպես արդեն տեսանք, դա ոչ միայն այդպես չէ, այլև հնարավոր էլ չէ Կասպիանեի սեղադրության (Կուրի հարավային մասում), վարչական պատկանելության (Մարական պետության մաս էր) ու քաղաքական այլ հանգամանքներով[39]։ Պատմական այս իրողությունն էլ (որ Կասպիանեն Մարաստանի և ոչ թե Ալբանիայի կազմում է) արտահայտված է Պտղոմեոսի հետևյալ վկայության մեջ. «(Մարաստանի) արևմտյան մարզը՝ Հայաստանին մոտ, զբաղեցնում են կասպերը, որոնցից ներքև ընկած է Մարգիանան»[40]։ Պտղոմեոսին վկայակոչելով նույնն է ասում և «Աշխարհացույցը»։ Հիշելով մարերին, որոնք իր ժամանակներում «ոչ ուրեք գտանին», հեղինակը գրում է. «բայց Պտղոմէոս ասէ զաշխարհս սոցա՝ Կասբ, Քաղաղուշ, Դելք, Դիլումք...»[41]։

Այսպիսով, պետք է զանազանել աղբյուրներում միևնույն անունով հայտնի, բայց միմյանցից էթնիկապես միանգամայն տարբեր ցեղերի՝ Կուրից հյուսիս, Կովկասյան լեռների փեշերին ապրող և կասպեր անվանվող ցեղերին ու նրանցով բնակեցված երկիրը, որը Ալբանիա-Աղվանքի մարզերից մեկն էր և Մարաստանի կազմում ապրող ու աղբյուրներում նույնպես կասպեր կոչվող ցեղերին, որոնք ոչ մի կապ չունեին Ալբանիայի հետ։

Կասպերի բնակության վայրերը պարզելուց հետո անցնենք 11-րդ սատրապության սահմանների որոշմանը։ Նախ ճշտենք, թե որ կասպերին է վերաբերում Հերոդոտի վկայությունը։ Դա դժվար չէ, քանի որ Ստրաբոնի հայտնի վկայությամբ կասպերով բնակեցված երկրներից Կասպիանեն մտնում էր Մարաստանի կազմի մեջ[42], իսկ վերջինս սատրապությունների ցուցակում հանդես էր գալիս 10-րդ համարի տակ[43]։ Միանգամայն պարզ է, որ Կասպիանեն, լինելով Մարական պետության երկրամասերից մեկը և նրա հետ միասին կազմելով 10-րդ սատրապությունը, միաժամանակ չէր կարող լինել նաև 11-րդ սատրապության կազմում։ Ուստի, կասկած չի կարող լինել, որ 11-րդ սատրապության կազմում հիշատակվող կասպերը նրանք էին, որոնք ապրում էին ալբանցիների հարևանությամբ։ Ուրեմն, աներկբա է, որ 11-րդ սատրապության սահմանները որոշվելու են հենց այս կասպերի երկրի՝ Կասպքի, սահմաններով։ Ուսումնասիրողները, անտեսելով 10-րդ սատրապության մաս կազմող Կասպիանեի միևնույն ժամանակ 11-րդում լինելու անհնարինությունը, այն ևս դիտում են 11-րդ սատրապության կազմում, դրանով իսկ արհեստականորեն ընդարձակելով խնդրառու սատրապության տարածքը։ 11-րդ սատրապությունը, դատելով Կասպքի սահմաններից, հարավում հասել էր միայն մինչև Կուր գետը, որով էլ միմյանցից բաժանվում էին հիշյալ սատրապությունները։ Կուրի՝ որպես երկու սատրապությունների սահմանաբաժան գիծ լինելը հավանական է ոչ միայն նրանով, որ այն Կասպքի հարավային սահմանն էր, այլև, որ ընդհանրապես աքեմենյանները սատրապությունները

---

38 Հմմտ. Բ. Ուլուբաբյան, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 65։

39 Նույն տեղում, Ալեքսան Հակոբյան, նշվ. աշխ., էջ 99։

40 Клавдий Птолемей, Географическое руководство, VI, 2.

41 «Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, ցաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 41։

42 Strabo, XI, XIV, 5.

43 Herodotus, III, 92.

ների սահմանները հաստատելիս պետք է օգտվեին մի այնպիսի բնական սահմանից, ինչպիսին գետն էր։ Վերջին ուսումնասիրություններից երևում է նաև, որ Կուրը սահմանագիծ էր նույն՝ 11-րդ և Արմինա-Հայաստանի մի մասը ներկայացնող 18-րդ սատրապության միջև[44]։ Ուրեմն գետը աքեմենյանների համար իսկապես ծառայում էր որպես բնական սահման և տվյալ դեպքում եզերում էր ողջ 11-րդ սատրապության հարավը։ Խնդրառու սատրապության հյուսիսային սահմանն անցնելու էր պարսկական ազդեցության ոլորտի վերջին գծով՝ այսինքն Կովկասյան լեռնաշղթայով[45], իսկ արևելյանը, ինքնըստինքյան պարզ է՝ հարելու էր Կասպից ծովին, որի արևմտյան ափերին էլ ապրում էին կասպերը։ 11-րդ սատրապության արևմտյան սահմանի որոշումը կախված է կից 18-րդ սատրապության արևելյան սահմանագծի ճշտումից։ Հայտնի է, որ վերջինս ընդգրկում էր Երվանդյան Հայաստանի արևելյան և հյուսիս-արևելյան շրջանները և նրա, կամ որ միևնույնն է, Հայաստանի հյուսիսային սահմանն անցնում էր Կուր գետով։ Սակայն վերջինս սահման էր ոչ ամբողջ Հայաստանի երկարությամբ. այն տեղ-տեղ անցել էր նաև Կուրից հյուսիս։ Անտիկ հեղինակներից Պլուտարքոսը Պոմպեոսի՝ Ալբանիա կատարած արշավանքների ու ետդարձի կապակցությամբ հիշատակում է աշխարհագրական մի վայր, որը կոչում է Փոքր Հայք[46]։ Ինչպես պարզել է Ա. Մնացականյանը, սա անտիկ աղբյուրներից հայտնի Կամբեճանն է՝ հարակից տարածքով[47]։ Կամբեճանը, ըստ Ստրաբոնի, Հայաստանի մասը կազմող երկիր էր և գտնվում էր Իբերիայի ու Ալբանիայի միջև, որտեղ հայերը սահմանակցում էին և՛ իբերների, և՛ ալբանցիների հետ[48]։ Այսինքն, արևմուտքից այն հարում էր Իբերիային, իսկ արևելքից՝ Ալբանիային, վերջինիս հետ ունենալով մի ընդհանուր սահմանաբաժան գիծ։ Ելնելով Ստրաբոնի մի այլ վկայությունից, կարելի է ենթադրել, որ այդ սահմանագիծը պետք է լիներ Ալազանը։ Այդ վկայությամբ «անցումը Իբերիայից՝ Ալբանիա անցնում էր անջատ և քարքարոտ Կամբիսենե (Կամբեճան—Հ. Ս.) մարզի միջով, դեպի Ալազան գետը»[49]։ Ալազան գետի՝ որպես Ալբանիայի արևմտյան սահմանի, մասին հաղորդում ունի նաև Պլինիոս Ավագը։ «Ամբողջ հարթությունը,— գրում է նա,— սկսած Կուր գետից բնակեցրել են ալբանցիների, ապա իբերների ցեղերը, որոնք առաջիններից բաժանված են Ալազան գետով»[50]։ Որ Ալազանը կարող էր լինել Ալբանիայի արևմտյան սահմանը, երևում է նաև Պլուտարքոսի և Դիոն Կասիոսի տեղեկություններից։ Համաձայն այս հեղինակների հաղորդումների, Պոմպեոսն ալբանցիների դեմ երկրորդ անգամ արշավելիս հարկադրված է եղել անցնել Կամբեճանով[51] և նոր միայն Ալազան գետի մյուս

---

44 Գ. Ա. Տիրացյան, Երվանդյան Հայաստանի տարածքը (մ. թ. ա. VI դ. վերջ—մ. թ. ա. III դ. վերջ), («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 73)։

45 Herodotus, III, 97.

46 «Այս (ալբանցիների դեմ տված—Հ. Ս.) ճակատամարտից հետո Պոմպեոսը մտադրվում է անցնել մինչև Կասպից ծով, բայց բազմաթիվ թունավոր զեռունների պատճառով հարկադրված էր ետ դառնալ, չնայած գտնվում էր ծովից ընդամենը երեք օրվա ճանապարհի հեռավորության վրա։ Այնուհետև նա ետ քաշվեց դեպի Փոքր Հայք» (Plutarch's Lvves, Pompey, XXXVI)։

47 Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 48—60։

48 Strabo, XI, IV, 1; XI, XIV, 4.

49 Նույն տեղում, XI, IV, 5։

50 Pliny, VI, 11.

51 Ալբանցիները, Պլուտարքոսի վկայությամբ, Կուր գետի վրա կառուցել էին երկարցանկապատնեշ (Plutarch's, Lives, Pompey, XXXV)։ Անկասկած, այն կառուցվել էր Ալբանիայի ամբողջ սահմանի երկարությամբ, մինչև Ալազան գետը, որի հետևանքով էլ Պոմպեոսը պիտի անցներ այլ երկրով անցնող ճանապարհով։

ափին հանդիպել ալբանական բանակին[52]։ Այսպիսով, անկասկած է, որ Ալբանիայի արեմտյան սահմանն ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ալազան գետն էր[53], որը և Կամբեճանի համար սահման էր արևելքում։ Ուրեմն, Կամբեճանն այն տարածքն էր, որը դեռևս հնադարում կազմում էր Հայաստանի անդրկուրյան մասը և որպես այդպիսին մտնում երկրի հյուսիս-արևելյան շրջաններն ընդգրկող 18-րդ սատրապության մեջ։ Եթե այդպես է, ապա վերջինիս արևելյան և նրան կից 11-րդ սատրապության արևմտյան սահմանը կազմելու էր Ալազանը, որը նույնպես բնական սահման էր աքեմենյանների համար։

Այսպիսով, 11-րդ սատրապությունն ընդգրկել է մի տարածություն, որը հյուսիսից ամփոփված է եղել Կովկասյան լեռնաշղթայի հարավային փեշերի, արևելքից՝ Կասպից ծովի, հարավից՝ Կուր գետի, իսկ արևմուտքից՝ Ալազան գետի միջև։ Այս տարածքում պետք է փնտրել նաև այն ցեղերին, որոնք կասպերի հետ մեկտեղ հիշատակվում են որպես 11-րդ սատրապության մեջ մտնող ցեղերի՝ այն է պավսիկներին, պանտիմաթներին ու դարեյտներին։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ դա բխում էր սատրապություններ կազմավորելու աքեմենյանների սկզբունքից։ Հերոդոտի վկայությամբ, սատրապություններն ստեղծվում էին հիմնականում միմյանց հարևան ժողովուրդներին մեկ վարչական միավորմամբ համախմբելու սկզբունքով[54]։ Ուրեմն, նշված ցեղերը մտնելու էին վերը ցույց տրված տարածության մեջ և, հավանարար, կովկասյան այն ցեղերից էին, որոնց մասին հաճախ են խոսում հայկական աղբյուրները՝ Եղիշեն, Փավստոս Բուզանդը, «Աշխարհացույց»-ի հեղինակը և ուրիշներ։

ПЛЕМЕННЫЕ СОЮЗЫ КАСПОВ В ПЕРИОД ГОСПОДСТВА АХЕМЕНИДСКОГО ИРАНА

(VI в. до н. э.—IV в. до н. э.)

ГЕНРИК СВАЗЯН

Резюме

До IV в. до н. э. прикаспийские племена носили общее племенное название «каспии». Античные авторы «каспиями» называли разные народности, живущие почти на всем протяжении западного побережья Каспийского моря. Такое общее название этих разнородных племен приводило к неправильному отождествлению албанцев со всеми племенами «каспиев». Каспии, в состав которых входили албанцы, составили одиннадцатую сатрапию Ахеменидской державы. Эта сатрапия ограничивалась с севера Кавказскими горами, с востока Каспийским морем, с запада рекой Алазани, а с юга—рекой Курой.

---

52 Plutarch, Lives, Pompey, XXXV.

53 *Հմմտ.* А. Яновский, О древней Кавказской Албании («Журнал Министерства народного просвещения», 1846, ч. 52, с. 97).

54 Herodotus, III, 89.